Ա փուլի Դասախոսություն 08:

Դասախոսություն 08

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ, ԻՆՎՈԼՅՈՒՑԻԱ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նախ մենք պետք է հասկանանք, որ Էվոլյուցիայի Օրենքը լիովին մեքենայական է: Երկրորդը, որ պետք է նկատենք, այն է, որ եթե գոյություն ունի Էվոլյուցիայի Օրենքը, գոյություն ունի նաև ինվոլյուցիայինը, քանի որ դա նրա երկվորյակ քույրն է հակադրությամբ: Մարդկության մեքենայական հույսը էվոլյուցիայի վրա ձախողում է: Եթե տեսնենք, թե որքան ենք «զարգացել» վերջին տարիներին, կնկատենք դա: Երբ էինք տեսել այդքան այլասերում, անբարոյականություն, պատերազմներ, մարմնավաճառություն, համասեռամոլություն, լեսբուհիականություն, դաժանություն և այլն, և այլն:

Մենք պետք է դադարենք երազել մեքենայական էվոլյուցիայի մասին և գիտակցենք, որ միայն Գիտակցական Հեղափոխության միջոցով է հնարավոր մարդկային վերածնունդը: Հասկանալ այն սխալը, որում գտնվում ենք, երբ հենվում ենք այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսին Դարվինի տեսությունն է:

Այս դասախոսության նպատակն է, որ կարողանանք պարզ տեսնել, թե ինչու ենք գալիս մոլորակ և ինչպես կարող ենք հասնել նպատակին:

Ինչպե՞ս ենք զարգանում բնության չորս թագավորություններով: Բոլոր կայծերը դուրս են գալիս Սուրբ Բացարձակ Արևից՝ իրենց Վարպետության կամ Ինքնաիրացման որոնմամբ՝ Ստեղծման Յոթ Ճառագայթներից մեկի միջոցով: Եվ իջնում են Սամսարայի Անիվ՝ դասընթացն անցնելու համար: Մի քանիսը հասնում են ինքնաիրացման, մեծամասնությունը ձախողվում է: Բոլորն ունեն ազատ կամք և չեն ստիպվում հաղթանակի հասնել:

Որպես հնարավորության ժամանակ սահմանվում է 300 000 էզոթերիկ տարի՝ ներկայացված երեք հազար (3 000) հոգիների ձևավորմամբ, 1 հոգի յուրաքանչյուր ցիկլի համար, և հարյուր ութ (108) մարդկային գոյություն հոգիներից յուրաքանչյուրի համար: Ինչը համարժեք է երեք հարյուր քսանչորս հազար (324 000) մարդկային ֆիզիկական մարմնի:

Անիվում կա երեք այլընտրանք.

Հաղթանակ (հասնել Ինքնաիրացման):
Ձախողում (սպառել գոյությունները և վերադառնալ բացարձակ 3 %-ով):
Հրաժարվել Անիվից և վերադառնալ Գիտակցության 3 %-ով:

Տեսնենք Սամսարայի Անիվը.

ՀԱՆՔԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ — ՄԻԱՈՒՂԵՂՆԵՐ — ԳՆՈՄ ՊԻԳՄԵՈՍ

ԲՈՒՍԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ — ԵՐԿՈՒՂԵՂՆԵՐ — ՏԱՐԲԱՅԻՆ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ — ԵՐԿՈՒՂԵՂՆԵՐ — ԱՆԻՄԱ

ԿԵՆԴԱՆԱՆՄԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՔԱՆՄԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՍԱՆՄԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՎՈԼՅՈՒՑԻԱ

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ

108 ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՎ

108

Բոլոր թերությունների քայքայումը մոլորակի ենթաչափումներում — Հսկվում է Տիֆոնի կողմից:

Որսալի էներգիայի 97 %-ի աղտոտում — Հսկվում է Անուբիսի կողմից

54

Աջից բարձրանում է Էվոլյուցիան՝ ղեկավարվող Անուբիսի կողմից: Ձախից իջնում է Ինվոլյուցիան՝ ղեկավարվող Տիֆոնի կողմից:

Էվոլյուցիայի մեջ մենք գտնում ենք բնության չորս թագավորությունները, իսկ Ինվոլյուցիայի մեջ՝ նույն չորս թագավորությունները ինվոլյուտիվ վիճակում.

- Հանքային Թագավորություն: - Հանքանման Թագավորություն:
- Բուսական Թագավորություն: - Բուսանման Թագավորություն:
- Կենդանական Թագավորություն: - Կենդանանման Թագավորություն:
- Մարդկային Թագավորություն: - Մարդանման Թագավորություն:

Ուսումնասիրենք Էվոլյուցիան.

Հանքային Թագավորությունում կայծը միացվում է հանքային ֆիզիկական մարմնի (քար, մետաղ, ավազահատիկ և այլն)

Նրա հոգին կոչվում է Գնոմ կամ Պիգմեոս և ունի սկզբնական կայծը՝ իր Գիտակցության 3 %-ով: Այն չունի հոգեբանական թերություններ, բայց սկսում է դրանց ստեղծումը: Նրան տրվում է առաջին ուղեղը, որը զգացականն է:

Այս պայմաններում այն կանցկացնի հազարավոր և նույնիսկ միլիոնավոր տարիներ՝ ձևավորելով իր առաջին թերությունները: Առաջին թերությունները, որ ձևավորում է, բնության Գուրու Դևաներին անհնազանդության թերություններն են: Շարունակում է հակակրանքի

թերություններով և այլն, և այլն:

Միակ պարտականությունը, որ կայծն ունի Հանքային թագավորությունում, այն դպրոցը հաճախելն է, որտեղ նրան սովորեցնում են թագավորության տարբեր բաները:

Երբ Անուբիսը տեսնում է, որ կայծն արդեն բավականաչափ թերություններ է ստեղծել, տեղափոխում է այն Բուսական թագավորություն:

Բուսական Թագավորությունում կայծը միացվում է մի բույսի՝ համաձայն այն սկզբնական Ճառագայթի, որին պատկանում է: Նրա հոգին կոչվում է Տարրային: Եվ նրա Գիտակցությունը շարունակում է մնալ 3 %-ով, ինչպես եկել էր, բայց այն տեղափոխվում է իր ստեղծած թերություններով:

Նրան տրվում է երկրորդ ուղեղը, որը Շարժիչ-Բնազդային-Սեռականն է:

Չնայած որ այն տնկված է մեկ տեղում, սկսում է բնազդային ուղեղի զարգացումը: Այս ուղեղը նրան թույլ է տալիս զգալ ցավ, հաճույք և վախ:

Այդպես այն մնում է որպես երկուղեղ էակ: Զգացական Ուղեղ և Շարժիչ-Բնազդային-Սեռական ուղեղ: Այն պետք է սկսի պայքարել իր սննդի համար, լույսի համար և մակաբույծ բույսերի դեմ և այլն: Այդ պայքարում այն ստեղծում է նոր հոգեբանական թերություններ, քանի որ արդեն ցավ է զգում և պետք է շատ բան ըմբռնի բնությունից՝ ուժեղանալու համար:

Երբ Գուրու Դևան տեսնում է, որ բավականաչափ թերություններ են ստեղծվել, անջատում է այն Բուսական թագավորությունից և միացնում Կենդանական թագավորությանը:

Կենդանական Թագավորությունում կայծը պահպանում է իր Գիտակցության 3 %-ը, պահպանում է Բուսական թագավորության երկու ուղեղները, այն տարբերությամբ, որ տնկված չէ և կարող է շարժվել, փնտրել իր սեփական սնունդը, սովորել պաշտպանվել այլ կենդանիներից և այլն, և այլն:

Այստեղ այն կզարգացնի իր բոլոր կենդանական բնազդները՝ պոռնկությունը, բռնությունը, վախը, ճարպկությունը, սովորում է գոյատևել կոշտ միջավայրում, մի փաստ, որը նրան տանում է նոր թերությունների ստեղծման:

Հոգին Կենդանական թագավորությունում կոչվում է Անիմա:

Երբ Գուրու Դևան տեսնում է, որ այն բավականաչափ թերություններ ունի, կտեղափոխի այն Մարդկային Թագավորություն:

Մարդկային Թագավորությունում նրան կտան նոր ուղեղ, որը Մտավորն է, և այն կստանա Հոգի անունը: Նրան տրվում են 108 գոյություններ մարդկային ֆիզիկական մարմնով: Արծաթե լարը կմիացնեն առաջին մարդկային ֆիզիկական մարմնին:

Այս պահից սկսած այն կիջնի ինը աստիճան, կամ ավելի ճիշտ՝ կայլասերվի տասներկու (12) գոյությունների ցիկլերով, մինչև իջնի ինը (9) աստիճանները:

Առաջին գոյությունները տեղի կունենան մի ցեղում՝ քաղաքակրթությունից հեռու վայրում: 54-րդ գոյությունն ավարտելիս Էվոլյուցիան կավարտվի: Եվ մարդը, այնքան Եսի պատճառով, որ ձևավորվել է, կսկսի Ինվոլյուցիան, չնայած որ դեռ իրավունք ունի ևս 54 գոյության՝ որպես Մարդանման: Բնազդը բանականությունը դնում է իր ծառայության, և Հոգին կամ Հոգեկանը սևանում է շատ ավելի արագացված ձևով:

Եթե չօգտվենք Հոգուց, կկորցնենք այն, քանի որ 108 գոյությունները սպառվելուց հետո կմտնենք Ինվոլյուցիա, մինչև բնությունը քայքայի հոգեբանական ագրեգատներից վերջինը, և հասնենք Երկրորդ Մահվան:

Ուսումնասիրենք Ինվոլյուցիան.

Հենց որ Մարդկային Թագավորությունում սպառվել են 108 գոյությունները, կայծը միացվում է ինվոլյուտիվ կենդանու, մինչդեռ նրա աղտոտված էությունը թափանցում է Դանթեական Ինը Շրջանները, որտեղից դուրս չի գա, մինչև բնությունն ավարտի բոլոր թերությունների քայքայումը:

Այստեղ այն կստանա բազմաթիվ կենդանական մարմիններ, իսկ ավելի ուշ կմիացվի ինվոլյուտիվ բույսերի բազմաթիվ մարմինների, և վերջապես կհասնի Ինվոլյուտիվ Հանքային Թագավորություն (քայքայվող հանքանյութեր):

Այս քայլերը պետք է կատարվեն, քանի որ Արևը չի կարող պարապ կայծեր ունենալ: Բոլորը պետք է ծառայեն Տրոգոյի Օրենքին:

Ի՞ՆՉ Է ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ:

Գիտակցության Հեղափոխությունը մի աշխատանք է, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է կատարի՝ իր սեփական փոփոխությանը հասնելու համար:

Այս փոփոխությունը կատարվում է Գիտակցության Հեղափոխության Երեք Գործոնների միջոցով.

- Հոգեբանական Մահ:
- Հոգևոր Ծնունդ:
- Ջոհաբերություն Մարդկության համար:

Հոգեբանական Մահ.

- Բացահայտել հոգեբանական թերությունները Ինքնաղիտարկման միջոցով:
- Դատել թերությունները, մինչև հասկանալ դրանք:
- Աղերսել Աստվածային Մորը, որ վերացնի հասկացված թերությունները:

Հոգեբանական մահով ազատագրվում է թերությունների մեջ գերված Գիտակցությունը:

Հոգևոր ծնունդ.

Ստեղծարար Սեռական էներգիայի իմաստուն օգտագործումը՝ Էակի Գոյութենական Մարմինները ստեղծելու համար: Տղամարդու և կնոջ սեռական միություն (ֆալոսը յոնիի մեջ)՝ առանց թափելու Ստեղծարար Սեռական Էներգիան:

Հոգևոր Ծնունդով ազատագրված Գիտակցությունն ամրագրվում է ողնուղեղում:

Ջոհաբերություն մարդկության համար.

Գիտելիքը մարդկությանը տալ անշահախնդրորեն, որպեսզի յուրաքանչյուր անձ, որ այն ստանում է, կարողանա կատարել իր սեփական Գործը:

Մարդկության համար զոհաբերությամբ արթնանում է Սերը:

Այսպիսով մենք ազատագրվում ենք Սամսարայի Անիվից, Էվոլյուցիայի և Ինվոլյուցիայի գործընթացներից, որոնց կապված ենք եղել շատ վաղուց ի վեր: Այդպես մենք հասնում ենք մեր Էակի Ինքնաիրացմանը:

Դասախոսություն 08-ի ավարտ